

Մարտին Ալեքսանդրի Մանուչարյան

Ծնվել է 1988 թվականի օգոստոսի 28-ին, Երևան քաղաքում:

2009 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2013 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

13.06.2009-24.10.2009թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

15.07.2010-19.08.2010թթ. աշխատել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

05.09.2010-14.03.2011թթ. աշխատել է «ՄԱՆԱ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

17.03.2011-24.09.2016թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

24.09.2016-01.08.2017թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական:

2015-2017թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում՝ որպես քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս:

25.04.2015 թվականից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ:

23.12.2016 թվականից հանդիսանում է Սնանկության գործերով կառավարիչ:

Ամուսնացած չէ:



Արթուր Նորիկի Ավագյան

Ծնվել է 1987 թվականի հուլիսի 29-ին Երևան քաղաքում:

2002 թվականին ավարտել է Երևանի թիվ 117 միջնակարգ դպրոցը:

2004 թվականին ավարտել է Երևանի «Իմաստասեր» վարժարանը:

2008 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2010 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

19.03.2013 թվականից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

09.02.2021 թվականից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է):

Ամուսնացած չէ:



Սամվել Մկրտչի Բաբայան

Ծնվել է 1994 թվականի հոկտեմբերի 15-ին, Երևան քաղաքում:

2012 թվականին ավարտել է Երևանի Գրիգոր Զոհրապի անվան թիվ 97 ավագ դպրոցը:

2012-2014թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

13.07.2018-14.09.2021թթ. աշխատել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

22.09.2021թ.-ից առ այսօր աշխատում է «Փայտե» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

Ամուսնացած է:



Մալվինա Տիգրանի Հարությունյան

Ծնվել է 1988թվականի նոյեմբերի 8-ին Գյումրի քաղաքում:

1995-2003թթ. սովորել է Գյումրու թիվ 10 միջնակարգ դպրոցում:

2003-2004թթ. շարունակել է կրթությունը Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոցում:

2004-2008թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, ստացել բակալավրի կոչում:

2008-2010թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում (քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ) և ստացել մագիստրոսի կոչում:

2008-2010թթ. աշխատել է «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում, որպես գիտաշխատող:

2011-2015թթ. աշխատել է Արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությունում, որպես առաջին կարգի մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ:

2015-2018թթ. աշխատել է Արդարադատության նախարարության օրենսդրության զարգացման և իրավական վերլուծության վարչությունում որպես առաջատար, այնուհետև՝ որպես գլխավոր մասնագետ:

2018-2020թթ. աշխատել է Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչությունում, որպես բաժնի պետ:

2020թվականից առ այսօր աշխատում է Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետի տեղակալ:

Տիրապետում եմ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների:

Անկուսակցական է:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:



Սիրան Սերգեյի Աֆյան

Ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 19-ին Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում:

2008 թվականին ավարտել է Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2014 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականին ավարտել է Հայաստանի Հանրապետության Փաստաբանական դպրոցը և 28.11.2015 թվականին ստացել է փաստաբանական գործունեության թիվ 1994 արտոնագիրը:

17.07.2012-05.05.2016թթ. աշխատել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.06.2016-30.12.2021թթ. աշխատել է «ԼիգլԱրտ իրավաբանական գրասենյակ» ՍՊ ընկերությունում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

01.06.2021-02.05.2022թթ. աշխատել է «Վարշամ» ՍՊ և «Կառոլ» ՍՊ ընկերություններում՝ որպես իրավաբան՝ համատեղության կարգով:

Տիրապետում է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին:

Հեղինակել է ԵՊՀ, 2013, Միջազգային գործարար էթիկայի կանոնների ժողովածուի «Գործարար հաղորդակցության էթիկա» հոդվածը:

Ամուսնացած է:



Նարինե Հայկի Թորոսյան

Ծնվել է 1996 թվականի նոյեմբերի 11-ին, Երևան քաղաքում:

2011 թվականին ավարտել է Կոտայքի մարզ, Քարաշամբ համայնքի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ 2014 թվականին Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնքի ավագ դպրոցը:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան:

2021 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան (գերազանցության դիպլոմ):

02.07.2018-01.02.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.02.2019 թվականից առ այսօր աշխատում է Սնանկության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



Արթուր Աղամալյան Սպարտակի

Ծնվել է 06.09.1972թ.-ին ՀԽՍՀ Կիրովական քաղաքում:

1979-1989թթ. սովորել է Ա.Ս.Պուշկինի անվան ռուսական միջնակարգ դպրոցում:

24.08.1989-08.08.1991թթ. աշխատել է Կիրովական կապի արտադրական միավորումում:

1991-1993թթ. ծառայել է Զինված ուժերում:

1993-1998թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:

19.10.1998-23.02.1999թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության ներման հարցերի խմբի առաջին կարգի մասնագետ:

23.02.1999-11.07.2000թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության քաղաքացիության, պարգևների և կոչումների հարցերի խմբի առաջատար մասնագետ, ապա 11.07.2000-19.07.2001թթ.՝ նույն վարչության նույն խմբի գլխավոր մասնագետ:

01.08.2001-30.04.2005թթ. աշխատել է «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

07.11.2005-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես գրասենյակի պետ:

01.01.2008-18.04.2009թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմում՝ որպես գրասենյակի պետ:

18.04.2009-10.01.2012թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

10.01.2012-13.01.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայությունում՝ որպես ավագ մասնագետ:

13.01.2015-01.09.2016թթ. աշխատել է «Սևանի Իշխան» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան, ապա 01.09.2016-31.03.2017թթ.՝ որպես բաժնի պետ:

24.08.2017-18.02.2019թթ. աշխատել է ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

15.05.2020-03.08.2020թթ. աշխատել է ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում՝ որպես իրավաբան:

11.12.2020-01.02.2022թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2012-2020թթ. ընթացքում 9 անգամ որպես միջազգային դիտորդ տարբեր երկրներում մասնակցել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի (OSCE ODIHR) և ԸԴԿԵՑ-ի (ENEMO) ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների կազմում:

Մասնակցել է հետևյալ ակադեմիական և մասնագիտական դասընթացների.

ՀՀ-ում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցերի գիտաժողով-եվրոպական միության խորհրդատվական խումբ՝ 2012 թվական:

ՀՀ-ում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցերի դասընթացներ-եվրոպական միության Թվինինգ ծրագիր՝ 2012 թվական:

«Միջազգային-տնտեսական մարտահրավերներ և զարգացման քաղաքականություն» ծրագիր-Հնդկաստանի ԱԳՆ-ի ITEC/SCAAP՝ 2013 թվական:

«Զարգացնող երկրների կառավարությունների պաշտոնյաների միջմշակութային հաղորդակցություններ» ծրագիր-Չինաստանի առևտրի նախարարության՝ 2013 թվական:

2012-2014թթ. հանդիսացել է «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով «Տղամարդիկ ընդդեմ ընտանեկան բռնության» նախաձեռնության համահիմնադիր և դասավանդող:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի 2 զավակ:



Արմինե Արամի Թումասյան

Ծնվել է 1986 թվականի նոյեմբերի 21-ին, Երևան քաղաքում:

2003 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 147 միջնակարգ դպրոցը (ոսկե մեդալով):

2003-2007 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան (գերազանցության դիպլոմ):

2007-2009 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում (քաղաքացիաիրավական մասնագիտացում)՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան:

27.12.2009-01.11.2018 թթ. աշխատել է Դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կենտրոնական մարմնում. 27.12.2008-02.12.2009թթ. որպես Կազմակերպաիրավական վարչության կրտսեր մասնագետ, 02.12.2009-14.10.2014թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության առաջատար մասնագետ, 14.10.2014-05.10.2015թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության ավագ մասնագետ, 05.10.2015-01.11.2018թթ.՝ որպես Իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի ավագ մասնագետ:

Ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար 28.12.2017 թվականին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

2018 թվականի նոյեմբերի 1-ից առայսօր զբաղեցնում է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի Իրավական

ակտերի մշակման և փորձաքննության վարչության ԲԴԽ նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժնի պետի պաշտոնը:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի որդի և դուստր:



Ինգա Վիգենի Բարսեղյան

Ծնվել է 1983 թվականի սեպտեմբերի 04-ին:

1990-1999 թթ. սովորել է Երևանի Շևչենկոյի անվան թիվ 42 դպրոցում:

2003 թվականին ավարտել Է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուտետը՝ ստանալով բակալավրի աստիճան:

2003-2006թթ. սովորել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2009-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

03.07.2006-18.04.2011թթ. աշխատել է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում, որպես իրավաբան (առաջատար մասնագետ):

02.05.2011-31.10.2011թթ. աշխատել է «Յուքոմ» ՍՊԸ-ում, որպես իրավաբան:

12.08.2013-31.05.2014թթ. աշխատել է «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ում, որպես իրավաբան:

04.05.2015-29.04.2016թթ. աշխատել է «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ում, որպես իրավաբան:

01.05.2016-06.08.2018թթ. աշխատել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ում, որպես իրավաբան:

16.08.2018-10.10.2018թթ. աշխատել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում, որպես Վարկային ծառայության իրավական սպասարկման մենեջեր:

21.12.2018-22.05.2020թթ. աշխատել եմ «Ֆորթին» ՍՊԸ-ում, որպես տնօրեն:

01.09.2021թվականից առայսօր աշխատում է «Լեգիթիմ» ՍՊԸ-ում, որպես տնօրեն:

03.12.2016 թվականին ստացել է փաստաբանի գործունեության արտոնագիր:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:



Գագիկ Գառնիկի Գրիգորյան

Ծնվել է 1984 թվականի նոյեմբերի 29-ին, Լոռու մարզի Ալավերդի քաղաքում:

1991-2001թթ. սովորել և ավարտել է Ալավերդի քաղաքի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 դպրոցը:

2002-2004թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2005-2010թթ. սովորել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետում և գերազանցության դիպլոմով ավարտել:

2012-2013թթ. սովորել և ավարտել է Փաստաբանական դպրոցը:

06.10.2013թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

18.08.2015թվականից հանդիսանում է բրիտանական CEDR-ի կողմից հավատարմագրված հաշտարար:

07.09.2015թվականից հանդիսանում է Արդարադատության նախարարության կողմից որակավորված դատական հաշտարար:

2006-2011թթ. աշխատել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի անվտանգության ծառայությունում՝ որպես հերթապահ:

2011-2012թթ. աշխատել է Ալավերդի քաղաքի քաղաքապետարանում՝ որպես Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջի կարգի մասնագետ:

2012-2013թթ. աշխատել է Դատական դեպարտամենտում, այնուհետև՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ դատավորի օգնական:

2013-2022թթ. աշխատել է «ՀԱՊ» ՍՊԸ փաստաբանական գրասենյակում՝ կրտսեր իրավախորհրդատու, այնուհետև՝ գործընկեր:

03.05.2021-31.07.2021թթ. աշխատել է «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ում՝ որպես դասախոս:

2017թվականից իրականացնում է անհատական փաստաբանական գործունեություն:

04.04.2022թվականից առայսօր հանդիսանում է «Բուռգեր Արմ» ՍՊԸ-ի տնօրեն:

Տիրապետում է հայերեն լեզվին գերազանց, ռուսերեն և անգլերեն լեզուներին՝ լավ:

Ամուսնացած է ունի 1 երեխա:



Իսկուհի Մայիսի Հովհաննիսյան

Ծնվել է 1992 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաքում:

1999- 2009թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

2009-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, ավարտել այն գերազանցության դիպլոմով և ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան:

2013-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում և ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան:

2016 թվականից առ այսօր սովորում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

30.04.2016թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

20.05.2013-20.11.2013թթ. աշխատել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.11.2013-01.02.2014թթ. աշխատել է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում՝ իրավաբանական և խնդրահարույց վարկերի վերադարձման վարչության մասնագետի պաշտոնում:

01.02.2014-01.07.2014թթ. աշխատել է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում՝ իրավաբանական վարչության հայցերի և բողոքների բաժնի մասնագետի, իսկ 01.07.2014-11.04.2016թթ՝ նույն բաժնի առաջատար մասնագետի պաշտոնում:

12.04.2016-01.05.20216թթ. աշխատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան, իսկ 01.05.2016-15.06.2017թթ.՝ իրավաբանական և անշարժ գույքի կառավարման դեպարտամենտի դատական գործերով խմբի ավագ իրավաբանի պաշտոնում:

26.06.2017-01.07.2021թթ աշխատել է «Մայկրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ-ում՝ իրավական հարցերով խորհրդականի պաշտոնում:

03.11.2017թ.-ին նշանակվել է նաև «Մայկրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ վարչության անդամի պաշտոնում և 25.01.2018թ.-ին Կենտրոնական բանկի կողմից ստացել է վկայական Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրինության անդամի պաշտոնում աշխատելու համար մինչև 25.01.2021թ.-ը գործողության ժամկետով:

05.02.2021թ.-ին Կենտրոնական բանկի կողմից ստացել է վկայական Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրինության անդամի պաշտոնում աշխատելու համար մինչև 05.02.2024թ.-ը գործողության ժամկետով:

01.07.2021-22.11.2021թ.-ը աշխատել է «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ-ում՝ իրավաբանի պաշտոնում:

22.11.2021թվականից առայսօր աշխատում է «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ-ում՝ իրավաբանական ծառայության ղեկավարի պաշտոնում:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:



Թաթուլ Ազատի Ղուկասյան

Ծնվել է 1986 թվականի հուլիսի 29-ին՝ Երևան քաղաքում:

2003թվականին ավարտել է Երևանի թիվ 165 միջնակարգ դպրոցում:

2007 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը և ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան:

2007-2009թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2013-2014թթ. հանդիսացել է Փաստաբանական դպրոցի ունկնդիր և ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

2020 թվականից մինչ օրս սովորում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայում:

2010-2012թթ. աշխատել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ում որպես իրավաբան, ապա՝ ավագ իրավաբան:

2012 թվականից առայսօր ծառայում է Ազգային անվտանգության մարմիններում և զբաղեցնում առաջատար իրավախորհրդատուի պաշտոնը:

Ամուսնացած է: Ունի 1 որդի և 1 դուստր:



Անի Հակոբի Կարաքեհյան

Ծնվել է 1990թվականի հունվարի 12-ին Երևան քաղաքում:

1997-2007թթ. սովորել է Շավարշ Սիմոնյանի անվան թիվ 112 միջնակարգ դպրոցում:

2007-2011թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2011-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

07.04.2014-03.04.2015թթ. աշխատել է ՀՀ ՊԵԿ-ում՝ զբաղեցնելով Նոր Նորքի ՀՏ-ի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի պաշտոնը:

19.10.2015-01.10.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

07.10.2019-01.10.2020թթ. աշխատել է «Է.Ռ.Ա.» պարտքերի գանձման իրավաբանական գործակալություն» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան:

Միաժամանակ 09.09.2019 թվականից առ այսօր աշխատում եմ «Գոռհակ Թրեյդ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

Ամուսնացած է, ունի 1 երեխա:



Շուշան Արմենի Ղազարյան

Ծնվել է 1992 թվականի օգոստոսի 13-ին, Երևան քաղաքում:

1999-2009թթ. սովորել է Երևանի Ալեքսանդր Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում:

2009-2013թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2013-2015թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015-2016թթ. սովորել է փաստաբանական դպրոցում՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ՝ ստանալով փաստաբանական գործունեության արտոնագիր:

2014-2017թթ. աշխատել է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում որպես փորձնակ մասնագետ, այնուհետև՝ իրավաբանական վարչության մասնագետ, առաջատար մասնագետ, ապա՝ գլխավոր մասնագետ:

2017-2018թթ. աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում որպես իրավաբանական ծառայության պայմանագրերի ու բիզնես ուղղությունների սպասարկման գծով իրավախորհրդատու:

2018-2021թթ. աշխատել է «Ջասթ Ին Թայմ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2021թվականից առայսօր աշխատում է «ՋԻԷՆ» ՍՊԸ-ում՝ նախ որպես իրավաբան, այնուհետ՝ որպես գլխավոր իրավաբան, ապա՝ որպես իրավաբանական բաժնի ղեկավար:

Ամուսնացած է, ունի 2 զավակ:



Գուրգեն Հովհաննեսի Մալխասյան

Ծնվել է 1967 թվականի հուլիսի 28-ին Լենինական քաղաքում:

1984-1989թթ. սովորել է Երևանի Կ. Մարքսի անվ. Աշխ. Կարմիր դրոծի շքանշանակ. պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետում՝ ստացել ինժեներ-մեխանիկի որակավորում:

1992-1996թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստացել իրավաբանի որակավորում:

1988-1991թթ. աշխատել է Գյումրիի «Հայհարավշին» տրեստում՝ որպես առաջատար ինժեներ:

1991-1992թթ. աշխատել է Գյումրիի «Հայհարավշին» տրեստի «Փյունիկ» ՓՁ-ում որպես տնօրեն:

1992-1993թթ. աշխատել է Շիրակի մարզի Ներքին գործերի վարչության օպեր-լիազոր:

1993-1996թթ. աշխատել է Գյումրիի «Բաշշին» ՇՄԳ-ում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

1996-1999թթ. աշխատել է «ԿԱՍՄԱ» ՍՊԸ-ում՝ որպես առաջին կարգի իրավախորհրադատու:

1999-2002թթ. աշխատել է Փաստաբանների միության անդամ, Գյումրի քաղաքի փաստաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան:

2002-2005թթ. աշխատել է Քաղաքացիական ծառայության խորհրդում որպես աշխատակազմի իրավաբանական վարչության պետ:

2005 թվականի փետրվար ամսից մինչև նույն թվականի դեկտեմբեր ամիսն աշխատել է Աշխատանքի պետական տեսչության իրավական վերահսկողության բաժնի պետ, ապա մինչև 2009 թվականի հունիսնորպես պեի տեղակալ , ապա՝ Աշխատանքի գլխավոր պետական տեսուչի տեղակալ:

2010-2012թթ. աշխատել է Ազգային ժողովի նախագահի տեղակալի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ իրավաբանական բլոկի ղեկավար:

2014-2021թթ. աշխատել է Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում՝ որպես համայնքի ղեկավարի տեղակալ՝ փոխքաղաքապետ:

2014 թվականից առայսօր հանդիսանում է «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի փոխտնօրեն, փաստաբան:

2003 թվականին շնորհվել է Քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

2010 թվականից առայսօր Փաստաբանների պալատի անդամ է:

2011-2017թթ. հանդիսացել է ՀՀ թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է: Ունի 4 երեխա:



Լիլիթ Կարապետի Գրիգորյան

Ծնվել է 1985 թվականի ապրիլի 30-ին, Գյումրի քաղաքում

1992-2002թթ. սովորել և ավատրել է Գյումրու Գ. Սարյանի անվան թիվ 24 դպրոցը:

2002-2006թթ. սովորել և ավարտել է «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2020 թվականին ընդունվել է «Հայբուսակ» համալսարանի Գյումրու մասնաճյուղի մագիտրատուրայի իրավագիտության ֆակուլտետ:

03.07.2006թ.-ին ընդունվել է աշխատանքի Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

01.11.2012-05.05.2019թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնում:

05.05.2019թ.-ից ժամանակավորապես կատարել է ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի գրասենյակի առաջին կարգի մասնագետի պարտականությունները:

07.11.2019թ.-ին լուծվել է ժամկետային աշխատանքային պայմանագիրը և նշանակվել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական:

02.12.2019թ.-ին ազատվել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնից և իր հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի գրասենյակի առաջին կարգի մասնագետի պարտականությունները կատարելու վերաբերյալ:

13.01.2020թ.-ին լուծվել է ժամկետային աշխատանքային պայմանագիրը և նշանակվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու որդի



Դավիթ Արմենի Օհանյան

Ծնվել է 1992թվականի հունիսի 19-ին Երևան քաղաքում:

1998-2008թթ. սովորել և ավարտել է Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան թիվ 196 միջնակարգ դպրոցը:

2009-2013թթ. սովորել և ավարտել է Ոստիկանության ակադեմիան՝ ստանալով բակալավրի աստիճան:

2014-2016թթ. սովորել և ավարտել է Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրան՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2017-2021թթ. սովորել է Ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրայում (թեմա՝ Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները):

28.02.2022թ.-ին Բարձրագույն որակավորման կոմիտեի Իրավագիտություն (001) մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

30.07.2013-01.09.2014թթ. աշխատել է Ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում՝ որպես իրավախորհրդատու:

22.06.2016-22.08.2018թթ. աշխատել է Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում՝ որպես ուսումնական ասիստենտ:

22.08.2018-02.04.2019թթ. աշխատել է Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում՝ որպես դասախոս:

02.04.2019-07.07.2021թթ. աշխատել է Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում՝ որպես ավագ դասախոս:

07.07.2021թվականից առայսօր զբաղեցնում է Ոստիկանության պարեկային ծառայության պետի տեղակալի, ապա՝ մոնիթորինգի և վերլուծության բաժնի պետի պաշտոնը, կոչումը՝ ոստիկանության մայոր: Ոստիկանության օրվա առթիվ, ծառայության ընթացքում ցուցաբերած խիզախության և նվիրումի, օրինականության և հասարակական կարգի պահպանության գործում ներդրած ավանդի համար Հայաստանի Հանրապետության Նախագահի 18.03.2022թ. հրամանագրով պարգևատրվել է երախտագիտության մեդալով: 2012 թվականի օգոստոս ամսին մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) կազմակերպած մրցույթին (Մինսկ, Բելառուս)

2019թ. հուլիս ամսին մասնակցել է Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպված Train the trainers վերապատրաստման դասընթացին (Նիկոսիա, Կիպրոս):

2019թ. սեպտեմբեր ամսին մասնակցել է Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպված Train the trainers վերապատրաստման դասընթացին (Սալոնիկ, Հունաստան):

2021թ. դեկտեմբեր ամսին մասնակցել է ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված պարեկային ծառայության ծառայողների վերապատրաստման ծրագրին, (Վիչիտա, Կանզաս, ԱՄՆ):

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների.

- ✓ «Կամքը և կամահայտնությունը պայմանագրի մեկնաբանման համատեքստում» Պետություն և իրավունք, Եր., 2018, N 2 (80), էջեր 54-62:
- ✓ «Պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ տեսությունը» Պետություն և իրավունք, Եր., 2019, N 2-3 (84-85), էջեր 100-108:
- ✓ «Պայմանագրի մեկնաբանման նախադրյալները» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2019, N 112, էջեր 30-36:
- ✓ «Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2019, N 114, էջեր 26-33:
- ✓ «Պայմանագրի ռեալ մեկնաբանումը» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2020, N 10, էջեր 177-194:
- ✓ «Պայմանագրի մեկնաբանման <<Contra Proferentem>> կանոնի ծագումը, զարգացումը և կիրառման նախադրյալները» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2021, N 11, էջեր 132-142:
- ✓ «Պայմանագրի մեկնաբանման <<Contra Proferentem>> կանոնի կիրառման դաշտն ու սահմանները» Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2021, հունվար-փետրվար, 1-2 (259-260), էջեր 72-81:
- ✓ «Պայմանագրի տառացի մեկնաբանումը» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2021, N 123, էջեր 17-24:
- ✓ «Պայմանագրի լրացնող մեկնաբանումը» Սահմանադրական դատարանի տեղեկագիր 1(101) 2021թ., էջեր 52-66
- ✓ «Խաբեություն: Խարդախություն, թե մասնավոր-իրավական դելիկտ» Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2020, սեպտեմբեր-հոկտեմբեր, 9-10 (255-256), էջեր 65-73:
- ✓ «Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը որպես հափշտակության առարկա դիտարկելու հարցի շուրջ» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2021, N 124, էջեր 10-16:
- ✓ ««Վնաս» եզրույթի հասկացությունը և սահմանները գրավառուին վնաս պատճառելը հանցակազմի հանցակազմի համատեքստում» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2020, N 119, էջեր 16-22:
- ✓ ««Գրավառուին վնաս պատճառելը» հանցակազմի հայեցակարգային մոտեցումների հիմնախնդիրները» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2021, N 121, էջեր 17-26:
- ✓ «Տաքսի ծառայություն, թե ինտերնետ միջնորդ» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2019, N 7, էջեր 108-122:

- ✓ «Առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի որոշ հիմնահարցեր» Եվրոպական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու 12 (01), 2021թ. էջեր 307-320
- ✓ «Կրիպտոարժույթները քաղաքացիական իրավունքի օբյեկտների համակարգում» Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, Եր., 2020, N 9, էջեր 206-219:
- ✓ «Հուղարկավորության ծախսերի անհրաժեշտության և ողջամտության սահմանների մասին» Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., 2020, N 116, էջեր 60-65:
- ✓ «Ինքնիրավչության հանցակազմի և պահման՝ որպես պարտավորության կատարման ապահովման միջոցի հարաբերակցությունը» հանձնվել է տպագրության Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագրում:
- ✓ «Ոստիկանության գործառույթները անշարժ գույքի պաշտպանության բնագավառում» հանձնվել է տպագրության Բանբեր Արդարադատության ակադեմիայի գիտագործնական հանդեսում:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներին:

Ամուսնացած չէ, երեխաներ չունի: